ԱԶԳ

# տնտեսություն

— Մինչ օրս այն մեծ՞ն եք, որ Ռուսաստանի կողմից առաջարկված ԱՊՀ ռազմական միությանն անդամակցելը ճիշտ քայլ չէ:

[illegible]

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# «Եւս երկու տարի եւ Հայաստանը կունենա ժամանակակից մաքսային ծառայություն»

*Պետության կարեւորագույն հիմք-օղակներից է մաքսային ծառայությունը: Եվ երբ համակարգում տարիի ոչ ճիշտ քաղաքականություն ինչ խոսք, այն իր բացասական ազդեցությունն ու հետեւանքը կթողնի եւ տնտեսության եւ համակարգի գործունեության վրա: Մաքսային ծառայությանն առնչվող հարցերին է պատասխանում ՀՀ մաքսային վարչության պետ Երվանդ Արզաքյանը:*

[illegible]

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

## Ձերբազատվել ոչ թե քաղաքատնտեսությունից, այլ հավակնոտ փառասիրությունից

Հայաստանի ամերիկյան համալսարան համատեղ ձեռնարկության կողմից (այստեղից է այդ համբավաբեր հասատության լիակատար անվանումը) Սամյուելսոնի եւ Նորդհաուսի հեղինակած «Տնտեսագիտություն» դասագրքի հրատարակման հետ մեծ սպասելիքներ էին կապում մասնագետները եւ ուսանողությունը: Այն լինելու էր ժամանակակից տնտեսագիտության առաջին դասագիրքը:

Ցավոք, տնտեսագիտության միակ հայերեն դասագրքի տիտղոսին հավակնող ձեռնարկը (առաջին հատորը) ոչ արհեստավարժ թարգմանության հետեւանքով կասկածի տակ դրեց նույնիսկ բնագրի վարկը եւ այն հսկայական ավանդը, որը Սամյուելսոնն ունի տնտեսագիտության զարգացման բնագավառում: Սակայն թարգմանության մասնագիտական որակը չէ, որ հարկադրում է մեզ հրապարակայնորեն հանդես գալ: Ուղղակի կարող ենք ասել, թարգմանությունը հաջողված արտացոլումն է այն ճշմարտության, որ տվյալ բնագավառի մասնագետն է ի զորու հեղինակային պատկերացումներն առանց աղավաղումների ներկայացնելու այլալեզու ընթերցողին: Այլապես անողոք տերմինն-



Ф.Սամյուելսոն, Ու. Նորդհաուս

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

րից զատ (օրինակ՝ «լծագնած»– սա գների ընդհանուր մակարդակի աճով ուղեկցվող արտադրության ծավալների կրճատումն է), կստացվեն նաեւ անբովանդակ մտքեր (օրինակ՝ «արտադրության եւ հնարավորությունների սահման» – սա արտադրական հնարավորությունների սահմանն է):

Առիթն առաջին հայացքից թեեւ փոքր է (չնայած առիթ կա, որը համարժեք է մի ամբողջ պատճառի), դա ամենուր տարածվող գովազդային թերթիկն է, որով հայալեզու գրախանութներին կոչ են անում գնելու այդ հատորյակը: Այն տարածվում է ամենուր, խսկապես ամերիկյան թափով եւ կրում է «Տնտեսագիտությունը յուրաքանչյուրիս բարեկեցության բանալին է» խորագիրը: Վերջում հեղափոխական կոչ է արվում՝ «Ձերբազատվենք քաղաքատնտեսությունից, կարդացեք ռուսալական տնտեսության այս հանրագիտարանը»:

Որ բնագիրը հանրագիտարան է, անվիճելի է: Իսկ հրատարակչի ռազմաշունչ կոչը «քաղաքատնտեսությունից ձերբազատվելու» մասին (այս երեւույթի առիթը) գնում է: Ցնցող է իր անիրազեկության աստիճանով: Կոչի հեղինակն անտեղյակ է, որ «քաղաքատնտեսությունն» ու «տնտեսագիտությունը» նույնական հասկացություններ են: Երեւի նրանց համար քաղաքատնտեսության դասագիրք է եղել Կ. Մարքսի «Կապիտալը», եւ այժմ մերժելով կոմունիզմը, «ձերբազատվում են քաղաքատնտեսությունից»՝ կապելով նրա ծնունդը մարքսիզմի կամ 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխության հետ:

Սահմանափակվենք եւ մեջբերում անենք ժամանակակից տնտեսագիտության հիմնադիր եւ այդ տերմին-անվանման հեղինակ Ալֆրեդ Մարշալից. **«Քաղաքատնտեսությունը կամ տնտեսագիտությունը զբաղվում է մարդկային հասարակության նորմալ կենսագործունեության հետազոտմամբ»**: Իսկ կիրառական նկատառումներից ելնելով **«... ավելի հարմար է այն նշանակել ավելի լայն «տնտեսագիտություն», քան նեղ «քաղաքատնտեսություն» տերմինով»**: Ընդամենն այսքանը:

Բայց, որպեսզի ընթերցողին ամեն ինչ այնքան մռայլ չթվա, որքան թվում է, գովազդաթերթիկի խորագրի կապակցությամբ հիշենք մի հին անգլիական կատակախոսություն:

**Հարց.** Ո՞վ է տնտեսագետը:

**Պատասխան.** Մարդ, որը գրոց անգամ չունի գրպանում եւ ուրիշներին այնտիպի խորհուրդներ է տալիս, որ դրանց հետեւելու դեպքում նույնպես կմնան առանց գրոշի:

Հ. Գ. Տեղեկացնենք, որ դասագրքի երկրորդ հատորի խմբագրմանը թարգմանության գործատերը ներգրավել է նաեւ մասնագետների: Հուսանք, նրանք կկարողանան հաղթահարել առաջին հատորով կանգնեցված խոչընդոտները եւ վերականգնել դասագրքի նախնական արժեքը:

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ,
ԵՊՀ

